ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-21-7/8-1

ք. Երևան «16».07.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Հարոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ծառայության մատուցման արդյունքում ստացված ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 38880000 (երեսունութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	«Տեքսուորլդ» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, ՈՒլնեցու 66 «Արմսվիսբանկ» ՓԲԸ Հ/Հ 2500000115940100 ՀՎՀՀ 01000327 տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Լ. ՀԱՐՈՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-21-7/8-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.Կոստյում, ներդրվող բաճկոնով ձմեռային դաշտային (լրակազմ) Ձմեռային կոստյումը բաղկացած է գլխանոցով բաճկոնից, ներդրվող բաճկոնից և հանովի ջերմապահպանիչ անդրավարտիքից: Կոստյումի ջերմապահպանությունը պետք է համապատասխանի ԳՕՍՏ Р -12.4. 236-2011, իսկ էլեկտրաստատիկ դաշտի ուժը արտադրանքի մակերեսին չպետք է գերազանցի 15կվտ/մ և պետք է համապատասխանի թեթևարդյունաբերական արտադրության անվտանգության պաշտպանության կանոնակարգի:

Բաճկոնի առաջամասի և հետևամասի ներդիրը մշակվում է անջրաթափանց արհեստական կտորով երկկողմանի, մգդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, թևքերը՝ անջրաթափանց արհեստական կտորով երկկողմանի, մգդակարված 120 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառացուն մշակվում է պաշպանական գույնի արհեստական մանրաթելով աստառացուի գործվածքից, մակերեսային խտությունը՝ առնվազն 80 գրամ **/համաձայն գծագիր 1-ի/**:



Գծագիր 1

<u>Արտաքին բաճկոնի նյութերը՝</u>

1. Երեսացուի գործվածք
2. Հողմապաշտպան գործվածք
3. Ճերմապահպանիչ
4. Հողմապաշտպան գործվածք
5. Աստառի գործվածք

Բաճկոնի թիկունքամասը մշակված է ամբողջական թևքերի հետ ձևվածքով կոկետկայով, որը տարաանջատվում է երկու մասի, իսկ կոկետկայից ներքև միալանջ **/նկար 1/**: Զարդակարի լայնությունը 0,6 սմ:



նկար 1.

Առաջամասերում գոտկատեղի ներքևի կարի եզրից 4-6սմ բարձրության վրա ներկարված են կողային թեք գրպաններ, գրպանների բերանը մշակված են 4-4.5x18-19սմ չափսի շերտիքով: Առաջամասերում գոտկատեղից 1-2սմ վերևի կարից զուգահեռ ներքևի գրպաններին ներկարված են կողային թեք գրպաններ, գրպանների մուտքը մշակված են 4-4.5x18-19սմ չափսի շերտիքով: Բաճկոնի ուսամասերում մշակված են 4.7-4.9 սմ լայնության և առնվազն 12 սմ (կախված բաճկոնի չափսերից) երկարության ախլակներ, որոնք կոճկվում են 14-16 մմ տրամագծի կոճակներով: Ախլակների վրա պետք է տեղադրված լինի 6,9-7,1 սմ երկարությամբ և 4,9-5,1 սմ լայնությամբ երեսացուի գործվածքից հանովի օղագոտի:

Թևքերի վրա ուսադիրի ախլակի միացման կարից դեպի ներքև՝ 8-9սմ հեռավորության վրա մշակվում են վրադիր, կափույրով ծավալուն թեք գրպաններ, կափույրի լայնությունը 5,5-6 սմ, գրպանի լայնությունը 12,5-13 սմ, երկարությունը կապուրի հետ միասին՝ 14.5-15 սմ, առանց կապուրի 13-14 սմ, կափույրները կոճկվում են 1,5-2.5սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսադիրների նկատմամբ՝ 120 աստիճան: Աջ և ձախ թևքերի ծավալուն վրադիր գրպանների կենտրոնում կարվում են 7,5 սմ տրամագծով կպչուն ժապավեններ: Թևքերի արմնկամասում մշակվում են 8-8,5x19-19.5 սմ չափսի լրացուցիչ կրկնակի զարդակարերով վրադիր արմնկակալներ, որոց թևքերի ընդհանուր կարից հակառակ եզրերը թեք մշակված:

Բաճկոնը մշակվում է կրկնակի շղթայով /երկրորդ շղթան նախատեսված է ներդրվող բաճկոնի միացման համար/ և 5 հատ 2x6սմ չափսի կպչուն ժակավենով՝ միմյանցից հավասար հեռավորության վրա, որից 1 հատը մշակվում է օձիքին: Մշակված երկկողմանի գաղտնի եզրաշերտի վրա: Առաջամասի կրծքամասում կարի ներքևի եզրով կարվում են 13,0 x 3 սմ չափսերի կպչուն ժապավեններ, տարբերանշանները փակցնելու համար: Բաճկոնը ներսի կողմից գոտկատեղի ուղղությամբ մշակված է կարգավորող քուղով: **Նկար 2**



նկար 2.

Գլխանոցի հետնամասում մշակվում է գաղտնի եզրաշերտի մեջով անցնող պլաստմասե կարգավորիչով ռետինե քուղ և 2,5-3 սմ լայնության և 11-12 սմ երկարության պատա կպչուն ժապավենով՝ չափսերը կարգավորելու համար:

Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ բաճկոնինը՝2-2.5սմ, իսկ թևքերինը՝ 1.5-2սմ:

Թևքերի բազուկային մասում մշակված են եզրաշերտերի միջով անցնող էլաստիկ ժապավենից ամրացրած պատաներ, որոնք կոճկվում են օղակով և 2հատ 14-16մմ տրամագծով կոճակներով:

Վզատեղը մշակված է կանգունակ օձիքով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Օձիքի բարձրությունը մեջ տեղում 13-14 սմ, իսկ եզրերում 11-12 սմ: Օձիքը ներսի կողմից մշակվում ֆլիզե կտորաշերտով:

Բաճկոնին միացված է երեսացուի գործվածքից կարգավորվող գլխանոց, որը ներսից մշակված է անջրաթափանց արհեստական գործվածքով: Գլխանոցը դեմից փակվում է 2x6սմ չափսի 2 հատ կպչուն ժապավեններով: Բաճկոնի օձիքի հետնամասում մշակված է գլխանոցի համար նախատեսված գրպանիկ, որը փակվում է 3 հատ 2x6սմ չափսի կպչուն ժապավեններով:

Բաճկոնի աստառի աջ կրծքամասում մշակված է անջրաթափանց արհեստական գործվածքից ծոցագրպան՝ շերտիկով, որը կոճկվում է կպչուն ժապավենով:

Բաճկոնի վզատեղում օձիքի միացման կարի վրա՝ կախիչից 12-15սմ աջ և ձախ հեռավորության վրա, մշակվում է 1-ական ռետինե մակօղակներ, իսկ թևքերի բազկակալի ներսում՝ կողային կարի վրա 9-10սմ դեպի ներս ևս մշակվում է 1-ական ռետինե մակօղակներ:

Ներդրվող բաճկոն

Բաճկոնի առաջամասի և հետևամասի ներդիրը մշակվում է անջրաթափանց արհեստական կտորով երկկողմանի, մգդակարված 120 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, թևքերը՝ անջրաթափանց արհեստական կտորով երկկողմանի, մգդակարված 100 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառացուն մշակվում է պաշպանական գույնի արհեստական մանրաթելով աստառացուի գործվածքից, մակերեսային խտությունը՝ առնվազն 80 գրամ **/համաձայն գծագիր 2-ի/**: Մատակարարը պարտավոր է ներկայացնի օգտագործված աստառացուի և սինտեպոնի մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:



Գծագիր 2

<u>Արտաքին բաճկոնի նյութերը՝</u>

1. Երեսացուի գործվածք
2. Հողմապաշտպան գործվածք
3. Ճերմապահպանիչ
4. Հողմապաշտպան գործվածք
5. Աստառի գործվածք

սճկոնի թիկունքամասը, առաջամասը և թևքերը մշակված է ամբողջական գործվածքով, թևքերը ներկարված և զարդակարված են l սմ կարով: Թևքերի եզրերը մշակված է 8-9 սմ երկարությամբ էլաստիկ երկշերտ տրիկոտաժե մանժետով (բազկակալով, ıիկոտաժե գործվածքի մակերեսային խտությունը առնվազն 500-600 գրամ:

Վզատեղը մշակված է կանգունակ օձիքով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Օձիքի բարձրությունը մեջ տեղում 9.5-10.5 սմ, իսկ եզրերում 8-9 սմ: Օձիքը ներսի կողմից մշակվում է 280 գրամ մակերեսային խտությամբ ֆլիզե

կտորաշերտով: Օձիքի և հետնամասի կարից 2սմ ներքև կարվում են 2 հատ 14-16մմ տրամագծով կոճակներով, իսկ թևքերի բազկակալների կարի վրա 1-ական 14-16մմ տրամագծով կոճակներով՝ արտաքին բաճկոնի մակօղակների համահունչ:
Բաճկոնի ուսամասերում մշակված են 4.7-4.9 սմ լայնության և առնվազն 12 սմ (կախված բաճկոնի չափսերից) երկարության ախլակներ, որոնք կոճկվում են 14-16 մմ տրամագծի կոճակներով: Ախլակների վրա պետք է տեղադրված լինի 6,9-7,1 սմ երկարությամբ և 4,9-5,1 սմ լայնությամբ երեսացուի գործվածքից հանովի օղագոտի:
Առաջամասերում բաճկոնի ներքևի եզրից 14-15սմ բարձրության վրա ներկարված են կողային թեք գրպաններ, գրպանների մուտքը մշակված են 18-15.5սմ երկարության շղթայով: Նկար 3:
Թևքերի վրա ուսադիրի միացման կարից դեպի ներքև 12 սմ հեռավորութան վրա կարվում են 7,5 սմ տրամագծով կպչուն ժապավեններ, իսկ կրծքանշանների համար նախատեսված կպչուն ժապավենները մշակված են կրծքամասի աջ և ձախ մասերում՝ ուսադիրից 12 սմ հեռավորության վրա: Բաճկոնը մշակվում է երկկողմանի գլխիկով շղթայով:



Նկար 3.

Անդրավարտիք

Մշակված է գոտիով՝ զարդակարված շեղանկյուն ձևով և հանովի-դնովի ներդիրով, որը ամրանում է անդրավարտիքին 6 հատ 14-16մմ տրամագծով կոճակներով: Գոտու վրա տեղադրված են 6 կամրջակներ, որից 2 կողայինները 4,5 սմ լայնությամբ, նախատեսված ռետինե կարգավորիչի համար:

Առաջամասը կողքի թեք ներկարված գրպաններով: Կողքերից մշակված են կափույրով ծավալուն եռածալ վրադիր գրպաններ: Կափույրների առաջամասը ֆիքսված է ամրակարով, իսկ հետնամասից կոճկվում են գաղտնի կոճկվածքով 1 օղակ 14-16մմ տրամագծով կոճակով: Գրպանի լայնությունը 20-21 սմ, երկարությունը 23-24 սմ, եռածալ, ծալքերի լայնությունը՝ առնվազն 5 սմ, կափյուրի լայնությունը 5.5-6.0 սմ, ծալքերը վերևից և ներքևից 2.5-3.0 սմ ամրակարված: Գրպանի վերնամասը (մուտքը) մշակված է 1 սմ լայնությամբ զարդակարով:

Առաջամասում մշակված են ծնկակալեր: Անդրավարտիքը կոճկվում է գաղտնի կոճկվածքով, /գուլֆիկով/ 3 հատ 14-16մմ տրամագծով օղակ կոճակներով և 2 հատ 14-16մմ տրամագծով օղակ կոճակներով, որոնք մշակված են գոտու վրա են: Անդրավարտիքը ներքնամասում կապվում է կապիչներով **/համաձայն գծագիր 3-ի և նկար 4/**:



Նկար 4



գծագիր 3

<u>Արտաքին բաճկոնի նյութերը՝</u>

1. Երեսացուի գործվածք
2. Հողմապաշտպան գործվածք
3. Աստառի գործվածք

Անդրավարտիքի ներդիրի գոտին համահունչ անդրավարտիքին, որը ներսից մշակված է ֆլիզե գործվածքից: Ներդիրը մշակվում է 150 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է աստառացուի հետ՝ ներքին եզրից 15 սմ բարձրության վրա: Ներդիրը կոճկվում է 2 հատ 15մմ տրամագծով կոճակներով:



գծագիր 4

Անդրավարտիքի հանովի ջերմապահպանիչի նյութեր՝

1. Աստառի գործվածք
2. Ջերմապահպանիչ 1-ին շերտ

3. Աստառի գործվածք

Բաճկոնի աստառացուի ձախակողմյան փեշի ներքին եզրից 1-0-15սմ բարձրության վրա կողակարին և անդրավարտիքի ծախ գոտկատեղի ներսի կարից կարվում են արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ, որի վրա պետք է նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը: Համազգեստի բոլոր կոճակները պետք է լինեն՝ պատրաստված ջերմակայուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկողմանի կարվող, պաշտպանական գույնի:

Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատուի կողմից տրամադրվում է երեսացուի գործվածքը,և ֆլիզե գործվածքը մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն կտորի ծախսի և մնացորդների վերաբերյալ:

Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված ներդիրի՝ սինտեպոնի և արհեստական կտորի, բազկակալի մակերեսային խտությունների վերաբերյալ եզրակացություն: Ընդ որում նմուշառումը պետք է կատարվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան մասնագետի մասնակցությամբ:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջանագիծը / Հասակը	44	46	48	50	52	54	56	58	60	62	64	Ընդամենը %
2	1,0	3,0	2,5	1,0								7,5
3	4,0	9,0	18,0	10,0	4,0	2,0	2,1	0,5	0,1			49,7
4	2,0	5,0	6,0	6,0	3,0	3,0	2,6	1,5	0,1	0,1	0,1	29,4
5	0,5	1,0	2,0	1,5	2,0	1,0	1,0	1,0	0,1	0,1	0,1	10,3
6			0,5	0,5	0,5	0,5	0,5	0,3	0,1	0,1	0,1	3,1
Ընդամենը %	**7,5**	**18,0**	**29,0**	**19,0**	**9,5**	**6,5**	**6,2**	**3,3**	**0,4**	**0,3**	**0,3**	**100,0**

Ծանոթություն՝ Պայմանագիրը կնքելուց հետո մատակարար կազմակերպությունը իր տրանսպորտային միջոցներով պատվիրատուի կողմից տրամադրվող նյութերը պետք է ստանա իրային կենտրոնական բազայից (ք. Երևան Արցախի 61):

Վճարովի ծառայությունների համար պատվիրատուի կողմից ըստ ապրանքատեսակների տրամադրվող նյութերի.

1.	Ապրանքատեսակը	Տրամադրվող նյութերը	Ծախսը մեկ միավորի համար
	Կոստյում, ներդրվող բաճկոնով ձմեռային դաշտային	Երեսացուի գործվածք	1,5 լայնքով 6մ կամ 9մ²
		Ֆլիզե գործվածք	0,4մ²

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Տեքստորլդ» ՍՊԸ
տնօրեն

Լ. ՀԱՐՈՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը 2021թ.
						4-րդ եռամսյակ ոչ ուշ քան հոկտեմբերի 31-ը
1	դերձակի ծառայություններ /Կոստյում, ներդրվող բաճկոնով ձմեռային դաշտային/	լ-կ	2000	19440	38880000	2000

Ծանոթություն՝ ծառայության արդյունքում մատուցված ապրանքատեսակները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության միջոցով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Տեքսուորլդ» ՍՊԸ
տնօրեն

Լ. ՀԱՐՈՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-21-7/8-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ, ընդ որում՝	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	դերձակի ծառայություններ /Կոստյում, ներդրվող բաճկոնով ձմեռային դաշտային/	98391120/27	19440000	38880000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Տեքսուորլդ» ՍՊԸ
տնօրեն

Լ. ՀԱՐՈՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-21-7/8-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի *համառոտ* շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով *հաստատված* գնման ժամանակացույցի	*փաստացի*	ըստ պայմանագրով *հաստատված* գնման ժամանակացույցի	*փաստացի*		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-21-7/8-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն